



Փոխանցումներ / Բանկային մուրհակներ

Դրամական փոխանցումների ապահով և արդյունավետ

Ճանապարհի Փոխանցումներ ՀՀ դրամով (ՀՀ տարածքում)¹

Հաշվից փոխանցումներ ²	300 ՀՀ դրամ ^{3*}
Ստացված գումարների մուտքագրումը հաշվին	անվճար
Վճարման հանձնարարականի փոփոխում կամ չեղարկում	5,000 ՀՀ դրամ
Բանկային մուրհակի թողարկում	6,000 ՀՀ դրամ

Արտարժույթով փոխանցումներ

- Բանկն իրականացնում է փոխանցումներ հետևյալ արտարժույթներով USD EUR GBP RUB CHF AUD AED HKD CAD JPY
- Կից կարելի է ուղարկել վճարման բացատրություններ և ցուցումներ

Փոխանցումներն իրականացվում են համաձայն ներկայացված գանձումների աղյուսակի.

Փոխանցումներ ԱՄՆ դոլարով/եվրոյով	Կիրառվող գանձումներ
Հաշվից փոխանցումներ կանխիկ մուտքագրման դեպքում	
<ul style="list-style-type: none">• Հաշվետեր հաճախորդների համար	0.3% ⁴
Հաշվից անկանխիկ գումարների փոխանցումների/արտարժույթի փոխանակման դեպքում	0.1%

Փոխանցումներ ԱՄՆ դոլարով/եվրոյից բացի այլ արտարժույթով

Հաշվից փոխանցումներ կանխիկ մուտքագրման դեպքում

3%

Հաշվից անկանխիկ գումարների փոխանցումների/արտարժույթի փոխանակման դեպքում

0.3%

Արտոնյալ սակագներ (բոլոր արտարժույթների համար, բացառությամբ ԱՄՆ դոլարից/եվրոյից տարբերվող այլ արտարժույթով կանխիկ միջոցների մուտքագրմամբ փոխանցումների)

Հաշվետեր հաճախորդները, կախված շրջանառության ծավալներից, կարող են օգտվել հետևյալ պայմաններից:

Վերջին 3 ամիսների ընթացքում ելքային փոխանցումների միջին ամսական ծավալը արտահայտված ԱՄՆ դոլարով

50.000 և ավելի

0.1%

Այլ պայմաններ

Բանկում առկա հաշիվների միջև փոխանցումներ

Անվճար

Արտարժույթով վճարման հանձնարարականի փոփոխություն

20,000 ՀՀ դրամ

Արտարժույթով վճարման հանձնարարականի չեղարկում

20,000 ՀՀ դրամ

Վճարման հանձնարարականի ուսումնասիրման վճար (զանձվում է անկախ ուսումնասիրման արդյունքներից)

20,000 ՀՀ դրամ

Արտարժույթով փոխանցված գումարների մուտքագրում հաշվին

6,000 ՀՀ դրամ

Կարևոր ծանուցում հաճախորդի կողմից իրականացվող գործարքների վերաբերյալ

Հարգելի հաճախորդ,

<<Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ), կարևորելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում Էյչ-Էս-Բի-Սի Խմբի և Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև <<Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին>> ՀՀ օրենքի պահանջները, սահմանել է մի շարք ներքին ընթացակարգեր և կանոնակարգեր, որոնք ուղղված են հաճախորդների կողմից իրականացվող գործարքների վերաբերյալ անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի հավաքագրմանը՝ տվյալ գործարքի միջոցների ծագման աղբյուրը և գործարքի նպատակը պարզելու համար:

Այս նպատակով Բանկը կարող է գործարքներ իրականացնող հաճախորդներից պահանջել տրամադրել լրացուցիչ տեղեկություններ գործարքի միջոցների ծագման աղբյուրի և գործարքի նպատակի վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում խնդրել տրամադրել միջոցների ծագման աղբյուրը և գործարքի նպատակը հավաստող փաստաթղթեր:

Հաճախորդի կողմից վերը նշված տեղեկատվության կամ փաստաթղթերի չտրամադրման դեպքում Բանկն իրավունք ունի մերժել տվյալ գործարքի իրականացումը:

Բանկի և հաճախորդի իրավունքները և պարտականությունները ֆինանսական հանցագործությունների և փողերի լվացման կանխարգելման շրջանակներում կարգավորվում են Բանկի՝ Հաճախորդների բանկային հաշիվների, բանկային ավանդների, էլեկտրոնային բանկային ծառայությունների և բանկային այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմանների (այսուհետ՝ Հիմնական պայմաններ) <<Ընդհանուր դրույթներ>> բաժնի 1.17. կետի, ինչպես նաև Հիմնական պայմաններին կից Հավելված 1-ով՝ <<Ֆինանսական հանցագործության ռիսկի կառավարման գործողությունների և հարկային համապատասխանության կապակցությամբ հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման և օգտագործման պայմանների>> պահանջներով:

Առավելագույնս կարևորելով հաճախորդների սպասարկման անվտանգությունը և ֆինանսական հանցագործությունների կանխարգելումը՝ Բանկն ակնկալում է Ձեր համագործակցությունը գործարքների իրականացման ժամանակ պահանջվող տեղեկատվության և փաստաթղթերի տրամադրման հարցում:

- Արտարժույթով ցանկացած ելքային փոխանցման կամ բանկային մուրհակի տրամադրման դեպքում նվազագույն միջնորդավճար - 6,000 ՀՀ դրամ
- Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար
- Միջնորդ/շահառու բանկի գանձումները կարող են վճարվել շահառուի կամ փոխանցողի կողմից՝ համաձայն հաճախորդի որոշման և բանկի հետ նախնական համաձայնության

- Բանկի պարտավորությունն է Հաճախորդին տրամադրել անդորրագիր յուրաքանչյուր մատուցված ծառայության կատարման վերաբերյալ
- Միջնորդ/շահառու բանկ(եր)ի գանձումները փոխանցողի հաշվից գանձման դեպքում կիրառվող միջնորդավճարներ, երբ շահառուն գումարը պետք է ստանա առանց պահումների.
- ԱՄՆ դոլարով ԱՄՆ տարածքում գործող ցանկացած բանկի ուղղված փոխանցումների համար - 5,000 ՀՀ դրամ
- ԱՄՆ դոլարով ԱՄՆ տարածքից դուրս որևէ բանկի ուղղված փոխանցումների համար – 10,000 ՀՀ դրամ
- Այլ արտարժույթով փոխանցումների համար – 5,000⁵ ՀՀ դրամ
- Միջնորդավճար ԱՄՆ դոլարով ԱՄՆ տարածքից դուրս որևէ բանկի ուղղված փոխանցումների համար, երբ փոխանցողը վճարում է միայն առաջին միջնորդ բանկի միջնորդավճարը և շահառուն գումարը ստանում է այլ միջնորդ / շահառու բանկերի պահումներից հետո - 5,000 ՀՀ դրամ
- Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ չի ընդունում արտարժույթային փոխանցումներ ՀՀ կենտրոնական բանկի իր արտարժույթային նոստրո հաշիվներով, բացառությամբ ՀՀ բանկերից ստացված այն փոխանցումների, որոնց շահառու հանդիսանում է «Արմենիան Քարդ ՓԲԸ»-ն:⁶

Փոխանցումների ռեկվիզիտներ

Եթե դուք ցանկանում եք ստանալ արտարժույթով փոխանցում արտերկրից, Ձեզ անհրաժեշտ է ունենալ տվյալ արտարժույթով բանկի թղթակցային հաշվի մանրամասները:

¹ ՀՀ տարածքում ՀՀ դրամով փոխանցումների դեպքում, եթե փոխանցվող գումարը պարունակում է լումա, ապա այն կկլորացվի մինչև տասնորդական նիշը՝ ստանդարտ մոտեցմամբ:

² Եթե վճարման հանձնարարականը (առավելագույնը 25 միլիոն ՀՀ դրամ) Բանկ է ներկայացվում մինչև ժամը 14:00, ապա այն կատարվում է նույն օր: Եթե այն ներկայացվում է

14:00-ից հետո, բայց ոչ ուշ, քան 15:00-ն և պահանջվում է կատարել նույն օրը, ապա կիրառվում է գանձում՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

Ինտերնետային/Մոբայլ և Հեռախոսային Բանկային ծառայությունների միջոցով մինչև ժամը 15:00-ն ներկայացված վճարման հանձնարարականները կատարվում են նույն օրը առանց լրացուցիչ գանձման:

³ Արտարժույթային հաշվից գանձման դեպքում փոխանակումը իրականացվում է Բանկի կողմից սահմանված համապատասխան փոխարժեքով:

⁴ Փոխանցումը Ինտերնետային/Մոբայլ կամ Հեռախոսային Բանկային ծառայության միջոցով իրականացնելու դեպքում կկիրառվի նվազեցված վճար` 0.1 % (նվազագույնը 6,000 ՀՀ դրամ):

⁵ Եթե փաստացի գանձված միջնորդավճարը ավել է, քան 20,000 ՀՀ դրամի համարժեքը, ապա վճարված և փաստացի գանձված միջնորդավճարների տարբերությունը ենթակա է գանձման փոխանցողի հաշվից:

⁶ Ուժի մեջ է սկսած 12/03/2016թ.-ից

* Ծառայությունն անվճար է, եթե վճարման հանձնարարականը ստացվել է Ինտերնետային/Մոբայլ կամ Հեռախոսային Բանկային ծառայության միջոցով:

Թարմացվել է` 18/01/2019 15:00